

Տ. ԽՈՐԵՆ ԱԲԵՂԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1958 թ. հունվարի 29-ին, ՀԽՍՀ Արարատի շրջանի Ծիրազ գյուղում:

Սկզբնական կրթությունը ստացել է գյուղի միջնակարգ դպրոցում:

1976—1978 թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1978 թ. ընդունվել և 1980 թ. ավարտել է Էջմիածնի ակումբաս-գրադարանային տեխնիկումի ռեժիսորական բաժինը:

1981 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1983 թ. դեկտեմբերին, ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1984 թ. ավարտել է ճեմարանը՝ ավարտական ունենալով «Գրիգոր Գ Պահլավունին և նրա մատենագրական վաստակը» թեման:

1985 թ. Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ մեկնել է Մոսկվա՝ Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հոգևոր ակադեմիայում ուսանելու, որտեղ 1987 թ. պաշտպանել է «Հայ Եկեղեցու սրբազան պատարագը. սկզբից մինչև մեր օրերը» թեմայով թեկնածուական թեզը և ստացել աստվածաբանության թեկնածուի աստիճան:

Մոսկվայից վերադառնալուց հետո նշանակվել է Արարատյան Հայրապետական թեմի Մրգավան գյուղի Ս. Հակոբ եկեղեցում՝ որպես սարկավագ:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա հայր սուրբին այն հույսով, որ նա իր իմացական ու հոգևոր կարողություններն ի սպաս կդնի Հայ Եկեղեցու ծառայության ի խնդիր: